Հավելված 6
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ 18/40»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՆՇԱԳԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ 18/40»

ք. Վանաձոր «06» ապրիլի 2018 թ.

«Վանաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյան-ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայմաս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Անդանիկ Մելիքյան-ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Վանաձոր համայնքի փողոցների նշագծման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 7850000 (յոթ միլիոն ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի՝ կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն

ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վանաձորի համայնքապետարան	Հայմաս ՍՊԸ
Ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22	Ք.Վանաձոր Տիգրան Մեծի փ.շ 34/54
Կենտրոնական գանձապետարան	Ամերիա բանկ ՓԲԸ
900232551029	1570025692080100
06901936	06952847
----------Մ.Ասլանյան	----------Ս.Մելիքյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 06 » ապրիլի 2018թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ 18/40» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը**
1	45231175	Տես ներքևում	դրամ	1	7850000	1	Քաղաքի տարբեր փողոցներում	01.06.2018-30.08.2018

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

Գնման առարկա է հանդիսանում Վանաձոր համայնքի փողոցների նշագծման աշխատանքները, որոնք ներառում են՝
· Վանաձոր համայնքի փողոցների նշագծում /0.15 մ լայնությամբ սպիտակ գույնի/
· Վանաձոր համայնքի փողոցների նշագծում /0.1 մ լայնությամբ սպիտակ գույնի/
· Փողոցների անցումների նշագծում /0.4 մ լայնությամբ-դեղին գույնի/
Աշխատանքներն իրականացվելու են անհրաժեշտ բանվորական արտահագուստով՝ պահպանելով անվտանգության կանոնները:
Փողոցների ցանկը կցվում է:

Հ/հ	Փողոցի անվանումը	Տիպը	Չափը	Քանակը
	0.4մ հաշվարկով			
1	Երևանյան խճուղի - Պետ. Ստանդարտ	Անցում	գծ:մ	52
2	Երևանյան խճուղի - Քոլեջ	Անցում	գծ:մ	56
3	Երևանյան խճուղի - Չուխաջյան	Անցում	գծ:մ	56
4	Երևանյան խճուղի - Աֆինա հարսանյաց սրահ	Անցում	գծ:մ	60
5	Երևանյան խճուղի - Գլորիա կարի ֆաբրիկա	Անցում	գծ:մ	60
6	Երևանյան խճուղի - Կույրերի միավորում	Անցում	գծ:մ	60
7	Զորավար Անդրանիկ - Գլորիա կարի ֆաբրիկա	Անցում	գծ:մ	52
8	Զորավար Անդրանիկ - 9 - րդ դպրոց	Անցում	գծ:մ	52
9	Զորավար Անդրանիկ - Ավտոդպրոց	Անցում	գծ:մ	56
10	Զորավար Անդրանիկ - Լճեր նախկին ԶԱԳՍ	Անցում	գծ:մ	52
11	Զորավար Անդրանիկ - Լճեր	Անցում	գծ:մ	52
12	Շահումյան հրապարակ	Անցում	գծ:մ	148
13	Ուկրաինական - 30 - րդ դպրոց	Անցում	գծ:մ	72
14	Տաշիրի խճուղի - 33 մանկապարտեզ	Անցում	գծ:մ	28
15	Խորենացի - Կ. Դեմիրճյան	Անցում	գծ:մ	326
16	Մյասնիկյան - Գր. Լուսավորիչ	Անցում	գծ:մ	210
17	Համբարձումյան - 25 րդ դպրոց	Անցում	գծ:մ	48
18	Համբարձումյան - ՃՏԳ համալսարան	Անցում	գծ:մ	72
19	Համբարձումյան - Սուխումի փողոց	Անցում	գծ:մ	128
20	Համբարձումյան - Ռուսթավի փողոց	Անցում	գծ:մ	128
21	Ուսանողական - Շինարարների խաչմերուկ	Անցում	գծ:մ	216

22	Ուսանողական - 23 -րդ դպրոց	Անցում	գծ:մ	52
23	Աղայան - Քոչինյան հրապարակ	Անցում	գծ:մ	60
24	Աղայան - 15 - րդ դպրոց	Անցում	գծ:մ	60
25	Աղայան - Դիմացի այգի	Անցում	գծ:մ	60
26	Աղայան – Ներսիսյան, Իսահակյան	Անցում	գծ:մ	60
27	Աղայան - 10 - րդ դպրոց	Անցում	գծ:մ	152
28	Աղայան - Գուգարք կինոթատրոն	Անցում	գծ:մ	72
29	Հալաբյան - 8 -րդ դպրոց	Անցում	գծ:մ	44
30	Մյասնիկյան - 22 - րդ դպրոց	Անցում	գծ:մ	192
31	Գր. Լուսավորիչ - 6 - րդ դպրոց	Անցում	գծ:մ	104
32	Սակտ Պետերբուրգ - 24 - րդ դպրոց	Անցում	գծ:մ	156
33	Տարոն - 4 - 16 - րդ դպրոց	Անցում	գծ:մ	36
34	Տարոն - 4 - 27 - րդ դպրոց	Անցում	գծ:մ	24
35	Գ. Նժդեհի փողոց - Հիվանդանոց	Անցում	գծ:մ	160
36	Մյասնիկյան - Նարեկացի եկեղեցի	Անցում	գծ:մ	48
37	Մյասնիկյան - Տպարան	Անցում	գծ:մ	72
38	Տերյան - 43 - րդ զորամաս	Անցում	գծ:մ	48
39	Գր. Լուսավորիչ – Շուկա 6-րդ դպրոց	Անցում	գծ:մ	104
40	Հայքի հրապարակ	Անցում	գծ:մ	320
41	Տիգրան Մեծ - Շիրակացի	Անցում	գծ:մ	68
42	Տիգրան Մեծ - 5 - րդ դպրոց	Անցում	գծ:մ	104
43	Տիգրան Մեծ-Նալբանդյան	Անցում	գծ:մ	272
44	Տիգրան Մեծ - Բաթումի	Անցում	գծ:մ	222
45	Տիգրան Մեծ - 4 - րդ դպրոց	Անցում	գծ:մ	68
46	Տիգրան Մեծ - Տերյան	Անցում	գծ:մ	240
47	Տիգրան Մեծ - Նժդեհ	Անցում	գծ:մ	224
48	Տիգրան Մեծ - Մխիթար Գոշ	Անցում	գծ:մ	208
49	Տիգրան Մեծ - Մյասնիկյան	Անցում	գծ:մ	284
50	Տիգրան Մեծ - Թատերական	Անցում	գծ:մ	32
51	Տիգրան Մեծ - Սպարապետ խանութ	Անցում	գծ:մ	72
52	Թումանյան Հրապարակ	Անցում	գծ:մ	512
53	Թումանյան փողոց մինչև Լոռվա հրապարակ - եկեղեցի	Անցում	գծ:մ	192
54	Սանկտ Պետերբուրգի փողոց Մթերային խանութ	Անցում	գծ:մ	28
55	Շիրակացի փողոց - բժշկական ուսումնարան խաչմերուկ	Անցում	գծ:մ	192
56	Կ. Դեմիրճյան – Վ.Ն.Ս.	Անցում	գծ:մ	52
57	Կ. Դեմիրճյան - Բաթումի	Անցում	գծ:մ	96
58	Կ. Դեմիրճյան - Տերյան	Անցում	գծ:մ	96
59	Զորավար Անդրանիկ - Ներսիսյան խաչմերուկ	Անցում	գծ:մ	258
60	Զորավար Անդրանիկ - Ավտոմատիկա գործարան	Անցում	գծ:մ	36
61	Ոսկե ցլիկ-Վարդանանց	Անցում	գծ:մ	76
62	Թիվ 1 երաժշտական դպրոց-Վարդանանց	Անցում	գծ:մ	40
63	Մյասնիկյան-Վարդանանց	Անցում	գծ:մ	284
64	Կենտրոնական գրադարան-Վարդանանց	Անցում	գծ:մ	72
65	Գարեգին Նժդեհ-Վարդանանց	Անցում	գծ:մ	160
66	Տերյան-Վարդանանց	Անցում	գծ:մ	160
67	Բաթումի-Վարդանանց	Անցում	գծ:մ	160
68	Բանյո Վարդանանց	Անցում	գծ:մ	160
69	Դեմիրճյան-Բանյո	Անցում	գծ:մ	96
70	Դեմիրճյան-Շիրակացի	Անցում	գծ:մ	96
71	Բժշկական ուսումնարան	Անցում	գծ:մ	40

72	Բաղրամյան էստակադա	Անցում	գծ:մ	104
	Ընդամենը			8512

	0.1մ հաշվարկով			
1	Հայքի հրապարակ	Գծանշում	գծ:մ	2072
2	Կիրովական ռեստորանից մինչև Ներսիսյան խաչմերուկ	Գծանշում	գծ:մ	2510
3	Մյասնկյան հագուստի շուկայից մինչև Թումանյան	Գծանշում	գծ:մ	300
4	Հայքի հրապարակից Խորենացիով երկաթգծի կայարան	Գծանշում	գծ:մ	368
5	Կ. Դեմիրճյան փողոց - Խորենացուց մինչև Շիրակացի	Գծանշում	գծ:մ	2354
6	Բաղրամյան կամուրջից մինչև Շիրակացի	Գծանշում	գծ:մ	5522
7	Զորավար Անդրանիկից մինչև Հուշարձան	Գծանշում	գծ:մ	1050
8	Համբարձումյան-Շինարարներ-Ուսանողական	Գծանշում	գծ:մ	1250
9	Ներսիսյան փողոց	Գծանշում	գծ:մ	950
10	Վարդանանց փողոց	Գծանշում	գծ:մ	2800
11	Զաքարյան փողոց	Գծանշում	գծ:մ	600
12	Աբովյան փողոց	Գծանշում	գծ:մ	1500
13	Հալաբյան փողոց	Գծանշում	գծ:մ	1250
14	Աղայան փողոց	Գծանշում	գծ:մ	1950
15	Մոսկովյան-Եկեղեցուց մինչև ավտոկայան	Գծանշում	գծ:մ	300
16	Բաղրամյան էստակադա	Գծանշում	գծ:մ	900
17	Վարդանանց-Շիրակացի խաչմերուկ մինչև Կ.Դեմիրճյան խաչմերուկ	Գծանշում	գծ:մ	500
18	ՈՒկրաինական	Գծանշում	գծ:մ	700
19	Գր. Լուսավորիչ Խորենացի-Մյասնիկյան	Գծանշում	գծ:մ	500
20	Մյասնիկյան Գր. Լուսավորիչ- եկեղեցի	Գծանշում	գծ:մ	1250
21	Մյասնիկյան Գր. Լուսավորիչ եկեղեցի-40ամյակ	Գծանշում	գծ:մ	450
	Ընդամենը			29076
	0.15 մ հաշվարկով			
1.	Թումանյան հրապարակից մինչև Լոռվա հրապարակ	Գծանշում	գծ:մ	1648
2.	Տիգրան Մեծ պողոտա - Շիրակացուց մինչև Թումանյան հրապարակ	Գծանշում	գծ:մ	3875
3.	Թումանյան հրապարակից մինչև Շահումյան հրապարակ	Գծանշում	գծ:մ	1240
4.	Զորավար Անդրանիկից մինչև Ներսիսյան խաչմերուկ	Գծանշում	գծ:մ	3776
	Ընդամենը			10539

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վանաձորի համայնքապետարան
Ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
900232551029
06901936

----------Մ.Ասլանյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Հայմաս ՍՊԸ
Ք.Վանաձոր Տիգրան Մեծի փ.շ 34/54
Ամերիա բանկ ՓԲԸ
1570025692080100
05952847

----------Ս.Մելքոյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1.1
« 06» ապրիլի 2018թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ 18/40»ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ
Վանաձոր համայնքի փողոցների նշագծում/1 կմ-ի համար/

հազ. դրամ

հ/հ	Աշխատանքի նկարագիրը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը
1	2	4	5	6	7
1	Փողոցի երթևեկելի մասի նշագծում/0.15 մ լայնությամբ սպիտակ գույնի/	1 կմ	1	139.11	139.11
	Վերադիր ծախսեր 13.3%				18.50
	Ընդամենը՝				157.61
	Շահույթ 11%				17.34
	Ընդամենը՝				174.95
	ԱԱՀ 20%				34.99
	Ընդամենը՝				209.94
	Ընդամենը՝ 3.875կմ-ի համար				813.52
2.	Փողոցի երթևեկելի մասի նշագծում/0.10 մ լայնությամբ սպիտակ գույնի/	1կմ	1	103.26	103.26
	Վերադիր ծախսեր 13.3%				13.73
	Ընդամենը՝				116.99
	Շահույթ 11%				12.87
	Ընդամենը՝				129.86
	ԱԱՀ 20%				25.97
	Ընդամենը՝				155.84
	Ընդամենը՝ 22.0683 կմ-ի համար				3439.12
3.	Փողոցների անցումների նշագծում /0.4 մ լայնությամբ դեղին գույնի/	1կմ	1	555.25	555.25
	Վերադիր ծախսեր 13.3%				73.85
	Ընդամենը՝				629.10
	Շահույթ 11%				69.20
	Ընդամենը՝				698.30
	ԱԱՀ 20%				139.66
	Ընդամենը՝				837.96
	Ընդամենը՝ 4.293 կմ-ի համար				3597.36
	Ընդհանուր՝				7850.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վանաձորի համայնքապետարան
Ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
900232551029
06901936

Մ.Ասլանյան
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Հայմաս ՍՊԸ
Ք.Վանաձոր Տիգրան Մեծի փ.2 34/54
Ամերիա բանկ ՓԲԸ
1570025692080100
06952847

Ա.Մելիքյան
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 2
« 06» ապրիլի 2018թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ 18/40»ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231175	Վանաձոր համայնքի փողոցների նշագծում						7850000	7850000	7850000	7850000	7850000	7850000	7850000	7850000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վանաձորի համայնքապետարան
Ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
900232551029
06901936

----------Մ.Ասլանյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Հայմաս ՍՊԸ
Ք.Վանաձոր Տիգրան Մեծի փ.2 34/54
Ամերիա բանկ ՓԲԸ
15700256920801 00
06952847

----------Ա.Մելիքյան
(ստորագրություն) Կ.Տ.